ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» դեկտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան
ՍՑ-ԳԲԽ-43/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2015թ. թիվ 1/73-1/24633-15 գրությամբ ներկայացված «Մալվինաթոյս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.09.2015թ. թիվ ԴՎԱ/2078 գրության հիման վրա, 07.09.2015թ. թիվ 1/73-1/24633-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Մալվինաթոյս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

2. «Մալվինաթոյս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Կենտրոնը կարծիք ստանալու նպատակով 15.10.2015թ. թիվ 01/04.1/2741-15 գրությամբ, ինչպես նաև հետագայում էլեկտրոնային եղանակով դիմել է «Մալվինաթոյս» ՍՊԸ-ին, որին ի պատասխան Ընկերության կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

«Մալվինաթոյս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-43/15 բողոքը քննող հանձնաժողովի 18.12.2015թ. ժամը 17:30-ի և 25.12.2015թ. ժամը 17:40-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.09.2015թ. թիվ ԴՎԱ/2078 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Պատվիրատուի և «Մալվինաթոյս» ՍՊԸ-ի միջև 12.01.2015թ. կնքված թիվ «ՇՀԾՁԲ-7/2-1» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 2.1.3 կետի «ա» ենթակետը՝ միակողմանի լուծարել է Պայմանագիրը և դրա անբաժանելի մասը կազմող 06.02.2015թ. կնքված N 1 համաձայնագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-43/15 բողոքը քննող հանձնաժողովի 18.12.2015թ. ժամը 17:30-ի և 25.12.2015թ. ժամը 17:40-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 25.12.2015թ. ժամը 17:40-ի նիստին, ով ներկայացրել է Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծարելու հիմքերը:

4. ՍՑ-ԳԲԽ-43/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2015թ. թիվ 1/73-1/24633-15 գրությամբ ներկայացված «Մալվինաթոյս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական

ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մալվինաթոյս» ՍՊԸ-ի միջև 12.01.2015թ. կնքվել է «ՇՀԾՁԲ-7/2-1» ծածկագրով լվացքի ծառայության գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1-րդ ենթակետի համաձայն՝ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Մալվինաթոյս» ՍՊԸ-ն) պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում (Հավելված N 1) Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված ստացողին՝ մատուցել Լվացքի ծառայություն (այսուհետ նաև՝ Ծառայություն)՝ համաձայն նույն Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայության արդյունքը և վճարել դրա համար (Հավելված N 3):

3. Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է համարվում, եթե՝

ա) մատուցած Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

4. Համաձայն Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի գնման ժամանակացույցի՝ Ընկերությունը պարտավորվել էր 2015թ. ընթացքում մատուցել լվացքի ծառայություն 40 տարբեր զորամասերին յուրաքանչյուր ամիս՝ համապատասխան ծավալներով: Լվացքի ծառայության մատուցումն պետք է սկսվեր 2015թ. փետրվարից:

5. Պայմանագրի հավելված N 2 լվացքի ծառայության տեխնիկական բնութագրով սահմանվել է Ընկերության հետևյալ պարտականությունները.

1. Կեղտոտ սպիտակեղենը տեղավորել և լվանալ ըստ կեղտոտվածության աստիճանների, չորացնել և արդուկել՝

- Անկողնային սպիտակեղեն (սավան՝ բամբակյա, բարձի երես՝ բամբակյա, վերմակածրար՝ բամբակյա, սրբիչներ՝ խավավոր և վաֆլե, սրբիչ՝ վաֆլե բաղնիքի), լվացումը շաբաթական մեկ անգամ,
- Ներքնազգեստ (շապիկ՝ բամբակյա, ներքնաշոր՝ տաք), լվացումը շաբաթական մեկ անգամ,

• Հոսպիտալային և խոհարարական հանդերձանք և սպիտակեղեն, լվացումը շաբաթական մեկ անգամ,

• Համազգեստի պարագաներ (ամառային համազգեստի լվացում՝ ամիսը մեկ անգամից ոչ ավել, ձմեռային համազգեստի երեսացուի լվացում՝ տարին մեկ անգամ, ամառվա ամիսներին):

• Մաքուր սպիտակեղենի տեղափոխությունը լվացքատնից զորամաս իրականացնել պոլիէթիլենային պարկերի մեջ:

2. Կեղտոտ և լվացած սպիտակեղենի տեղափոխությունը պետք է իրականացնի լվացք կատարող կազմակերպությունը:

3. Կեղտոտ սպիտակեղենի ընդունում-հանձնումը պետք է իրականացվի տվյալ կազմակերպության լիազորված ներկայացուցչի կողմից:

6. Համաձայն ՀՀ ՊՆ 81151 զորամասի պատասխանատու ստորաբաժանման կողմից 14.02.2015թ. կազմված արձանագրության՝ 07.02.2015թ. Ընկերության կողմից զորամասից տարվել է կեղտոտ սպիտակեղեն, որից սավան՝ 503 հատ, վերմակածրար՝ 5 հատ, սրբիչ վաֆլե՝ 112 հատ, սրբիչ բաղնիքի՝ 30 հատ, ձմեռային շապիկ՝ 108 հատ, ձմեռային վարտիկ՝ 89 հատ: Զորամասի կողմից հանձնված լվացքը դրոշմավորված է եղել 81151 զորամասի դրոշմով: Նույն թվականի փետրվարի 14-ին Ընկերության կողմից հետ է վերադարձվել նշված սպիտակեղենը, լվացքի որակը լավ է, սակայն ի հայտ են եկել ՊՆ տարբեր զորամասերին պատկանող սավաններ, մասնավորապես՝ ՀՀ ՊՆ 51036 զորամաս՝ 10 հատ, ՀՀ ՊՆ 51191 զորամաս՝ 14 հատ, ՀՀ ՊՆ 21127 զորամաս՝ 7 հատ, ՀՀ ՊՆ 51556 զորամաս՝ 3 հատ, ՀՀ ՊՆ 80046 զորամաս՝ 4 հատ, ՀՀ ՊՆ 13516 զորամաս՝ 5 հատ, ՀՀ ՊՆ 56952 զորամաս՝ 2 հատ, ՀՀ ՊՆ 35389 զորամաս՝ 2 հատ, ՀՀ ՊՆ 36534 զորամաս՝ 4 հատ, ՀՀ ՊՆ 63853 զորամաս՝ 12 հատ:

7. ՀՀ ՊՆ 37082 զորամասի պատասխանատու ստորաբաժանման կողմից 11.02.2015թ. կազմված զեկուցագրի համաձայն՝ Ընկերության կողմից զորամասեր առաքված լվացած սպիտակեղենը եղել է խոնավ, բերվել է հանձնած թվաքանակից քիչ, պիտակավորումը՝ այլ զորամասերի, իսկ 81151 զորամասում՝ փետրվարի 7-ի փոխարեն բերվել է փետրվարի 8-ին:

8. ՀՀ պաշտպանության նախարարությունը 10.02.2015թ. Ընկերությանը տեղեկացրել է, որ ՀՀ ՊՆ 63853 և 51556 զորամասերից ստացվել են բողոքներ՝ կապված լվացքի ծառայության մատուցման որակի ժամկետների խախտումների վերաբերյալ, ուստի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին ոչ

համապատասխան ծառայություն մատուցելու դեպքում՝ Ընկերության նկատմամբ կկիրառվեն Պայմանագրով նախատեսված պատժամիջոցներ:

9. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 09.05.2015թ. կազմված արձանագրության համաձայն՝ 06.09.2015թ. դրությամբ «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն»-ի տարածքում տեղակայված «Գառանտ Շեն» ՍՊԸ-ին պատկանող լվացքատանը իրականացվում է ՀՀ ՊՆ 68617, 54574 և 55565 զորամասերին պատկանող սպիտակեղենի լվացքը:

10. 25.06.2015թ. զեկուցագրով պատասխանատու ստորաբաժանումը ՀՀ զինված ուժերի Գլխավոր շտաբին տեղեկացրել է, որ վերոհիշյալ զորամասերի կեղտոտ ստիտակեղենի լվացման նպատակով երրորդ կողմին փոխանցելու վերաբերյալ Պատվիրատուն չի տեղեկացվել Ընկերության կողմից: Ինչպես նաև չի բացառվում, որ «Գառանտ Շեն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ՊՆ պատկանող կեղտոտ սպիտակեղենի լվացման հետ մեկտեղ իրականացվում է վերոհիշյալ բուժհաստատության կամ հնարավոր այլ պատվիրատուի կեղտոտ սպիտակեղենի լվացումը, որը թույլատրելի չէ:

11. Պատվիրատուն 17.02.2015թ., 03.03.2015թ., 26.05.2015թ. գրություններով նախազգուշացրել է Ընկերությանը Ծառայության մատուցման ընթացքը և որակը կարգավորելու վերաբերյալ, քանի որ ՀՀ ՊՆ զորամասերից ստացվել են բողոքներ կապված լվացքի ծառայության մատուցման որակի և ժամկետների խախտումների վերաբերյալ:

Պատվիրատուն վերոհիշյալ գրություններով հայտնել է Ընկերությանը, որ Ծառայության մատուցման որակը և ժամկետները չկարգավորելու դեպքում Պայմանագիրը միակողմանի կլուծարվի:

12. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 18.08.2015թ. կազմված արձանագրության համաձայն՝ ՀՀ ՊՆ 68617 և ՀՀ ՊՆ 55565 զորամասերում լվացքատնից ընդունված և դեռ անձնակազմին չհատկացված խմբաքանակներից համապատասխանաբար 6 և 2 հատ «բարձի երես» սպիտակեղենի լվացքի որակը անբավարար է:

13. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 18.08.2015թ. կազմված արձանագրության համաձայն՝ ՀՀ ՊՆ 21127 զորամասում կատարված ստուգման արդյունքում պարզվել է, որ զորամասում լվացքատնից ընդունված և պահեստավորված սավան, բարձի երես, սրբիչ և տաք ներքնաշոր սպիտակեղենի խմբաքանակներից բարձի երեսների լվացքի որակն գնահատվել է անբավարար:

14. ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.08.2015թ. թիվ ԴՎԱ/2037 գրությամբ «Մալվինաթոյս» ՍՊԸ-ին հայտնել է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետը, 01.09.2015թ. միակողմանի լուծում է կողմերի միջև կնքված Պայմանագիրը:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-43/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2015թ. թիվ 1/73-1/24633-15, ՀՀ պաշտպանության նախարարության 01.09.2015թ. թիվ ԴՎԱ/2078 գրությունները և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝ ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ***որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մալվինաթոյս» ՍՊԸ-ի միջև 12.01.2015թ. կնքված «ՇՀԾՁԲ-7/2-1» ծածկագրով լվացքի ծառայության գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել էր 2015թ. ընթացքում մատուցել լվացքի ծառայություն ՀՀ պաշտպանության նախարարության թվով 40 տարբեր զորամասերի՝ յուրաքանչյուր ամիս, համապատասխան ծավալներով: Լվացքի ծառայության մատուցումն պետք է սկսվեր 2015թ. փետրվարից:

ՀՀ ՊՆ 81151 զորամասի պատասխանատու ստորաբաժանման կողմից 14.02.2015թ. կազմված արձանագրությամբ ամրագրվել էր, որ 07.02.2015թ.

Ընկերության կողմից զորամասից տարվել է կեղտոտ սպիտակեղեն, որից սավան՝ 503 հատ, վերմակածրար՝ 5 հատ, սրբիչ վաֆլե՝ 112 հատ, սրբիչ բաղնիքի՝ 30 հատ, ձմեռային շապիկ՝ 108 հատ, ձմեռային վարտիկ՝ 89 հատ: Զորամասի կողմից հանձնված լվացքը դրոշմավորված է եղել 81151 զորամասի դրոշմով: Նույն թվականի փետրվարի 14-ին Ընկերության կողմից հետ է վերադարձվել նշված սպիտակեղենը, լվացքի որակը գնահատվել է լավ, սակայն ի հայտ են եկել ՊՆ տարբեր զորամասերին պատկանող սավաններ, մասնավորապես՝ ՀՀ ՊՆ 51036 զորամաս՝ 10 հատ, ՀՀ ՊՆ 51191 զորամաս՝ 14 հատ, ՀՀ ՊՆ 21127 զորամաս՝ 7 հատ, ՀՀ ՊՆ 51556 զորամաս՝ 3 հատ, ՀՀ ՊՆ 80046 զորամաս՝ 4 հատ, ՀՀ ՊՆ 13516 զորամաս՝ 5 հատ, ՀՀ ՊՆ 56952 զորամաս՝ 2 հատ, ՀՀ ՊՆ 35389 զորամաս՝ 2 հատ, ՀՀ ՊՆ 36534 զորամաս՝ 4 հատ, ՀՀ ՊՆ 63853 զորամաս՝ 12 հատ:

ՀՀ ՊՆ 37082 զորամասի պատասխանատու ստորաբաժանման 11.02.2015թ. զեկուցագրի համաձայն՝ Ընկերության կողմից զորամասեր առաքված լվացած սպիտակեղենը եղել է խոնավ, բերվել է հանձնած թվաքանակից քիչ, պիտակավորումը՝ այլ զորամասերի, իսկ 81151 զորամասում՝ փետրվարի 7-ի փոխարեն բերվել է փետրվարի 8-ին:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 09.05.2015թ. կազմված արձանագրության համաձայն՝ 06.09.2015թ. դրությամբ «Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն»-ի տարածքում տեղակայված «Գառանտ Շեն» ՍՊԸ-ին պատկանող լվացքատանը իրականացվում է ՀՀ ՊՆ 68617, 54574 և 55565 զորամասերին պատկանող սպիտակեղենի լվացքը: Ընդ որում, Պատվիրատուն արձանագրել է նաև, որ «Մալվինաթոյս» ՍՊԸ-ն Պատվիրատուին որևէ կերպով չի տեղեկացրել Ծառայության մատուցումը երրորդ անձի կողմից իրականացնելու վերաբերյալ:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 18.08.2015թ. կազմված արձանագրության համաձայն՝ ՀՀ ՊՆ 68617 և ՀՀ ՊՆ 55565 զորամասերում լվացքատնից ընդունված և դեռ անձնակազմին չհատկացված խմբաքանակներից համապատասխանաբար 6 և 2 հատ «բարձի երես» սպիտակեղենի լվացքի որակը գնահատվել էր անբավարար:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 18.08.2015թ. կազմված արձանագրության համաձայն՝ ՀՀ ՊՆ 21127 զորամասում կատարված ստուգման արդյունքում պարզվել է, որ զորամասում լվացքատնից ընդունված և

պահեստավորված սավան, բարձի երես, սրբիչ և տաք ներքնաշոր սպիտակեղենի խմբաքանակներից բարձի երեսների լվացքի որակը անբավարար է:

Ընդ որում, Պատվիրատուն մի շարք գրություններով (10.02.2015թ., 17.02.2015թ., 03.03.2015թ., 26.05.2015թ.) ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ անհրաժեշտ է կարգավորել Ծառայության մատուցման ընթացքը, որակը և ժամկետները, քանի որ համապատասխան զրամասերից ստացվում են բողոքներ:

ՀՀ պաշտանության նախարարությունը 27.08.2015թ. թիվ ԴՎԱ/2037 գրությամբ «Մալվինաթոյս» ՍՊԸ-ին հայտնել է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետը, 01.09.2015թ. միակողմանի լուծում է կողմերի միջև կնքված Պայմանագիրը:

Այսպես, Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է համարվում, եթե՝

ա) մատուցած Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Կենտրոնը արձանագրում է, որ «Մալվինաթոյս» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական խախտում, որի արդյունքում Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Այսպես Պայմանագրի թիվ 2 հավելված՝ լվացքի ծառայության տեխնիկական բնութագրով Ընկերությունը պարտավորվել էր.

- Կեղտոտ սպիտակեղենը տեղավորել և լվանալ ըստ կեղտոտվածության աստիճանների, չորացնել և արդուկել՝

- Անկողնային սպիտակեղեն (սավան՝ բամբակյա, բարձի երես՝ բամբակյա, վերմակածրար՝ բամբակյա, սրբիչներ՝ խավավոր և վաֆլե, սրբիչ՝ վաֆլե բաղնիքի), լվացումը շաբաթական մեկ անգամ,
- Ներքնազգեստ (շապիկ՝ բամբակյա, ներքնաշոր՝ տաք), լվացումը շաբաթական մեկ անգամ,
- Հոսպիտալային և խոհարարական հանդերձանք և սպիտակեղեն, լվացումը շաբաթական մեկ անգամ,

• Համազգեստի պարագաներ (ամառային համազգեստի լվացում՝ ամիսը մեկ անգամից ոչ ավել, ձմեռային համազգեստի երեսացուի լվացում՝ տարին մեկ անգամ, ամառվա ամիսներին):

• Մաքուր սպիտակեղենի տեղափոխությունը լվացքատնից զորամաս իրականացնել պոլիէթիլենային պարկերի մեջ:

- Կեղտոտ և լվացած սպիտակեղենի տեղափոխությունը պետք է իրականացնի լվացք կատարող կազմակերպությունը:

- Կեղտոտ սպիտակեղենի ընդունում-հանձնումը պետք է իրականացվի տվյալ կազմակերպության լիազորված ներկայացուցչի կողմից:

Պատվիրատուի համապատասխան պատասխանատու ստորաբաժանումների կողմից կազմված մի շարք արձանագրություններով ամրագրվել է, որ Ընկերության կողմից մատուցված ծառայության որակը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված չափանիշներին, ինչպես նաև Ընկերության կողմից խախտվել է նաև Ծառայության մատուցման ժամկետները: Ընդ որում, Պատվիրատուն մի շարք գրություններով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով կարգավորել ծառայության մատուցման ընթացքն ու որակը, որը սակայն Ընկերության կողմից չի իրականացվել:

Հետևաբար, Կենտրոնը արձանագրում է, որ Ընկերության կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ավելի քան մեկ անգամ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծարման:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u>** ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

• *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Կենտրոնն արձանագրում է, որ «Մալվինաթոյս» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը:***

Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-43/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ ***Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (01.09.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:***

Հետևաբար, գտնում ենք, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր դեռևս առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 07.09.2015թ. թիվ 1/73-1/24633-15 գրությամբ ներկայացված «Մալվինաթոյս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00458098) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և

ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-43/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան